ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 11

ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հրապարակային սակարկությունների մասին>> օրենքի 14 և 17 հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում կայացած անշարժ գույքի բաց դասական աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում կայացած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի Էջմիածնի խճղ. 1/2 հասցեով գտնվող 04-048-0201-0010 ծածկագրի 0,5502 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատարածքի և նրան ամրակայված 04-048-0201-0010-001 ծածկագրի 451,6 քմ կիսաքանդ շինության բաց դասական աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

1/ 04-048-0201-0010 ծածկագրի 0,5502 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման այլ արտադրական նպատակային նշանակության հողատարածքը վաճառել 7868540 /յոթ միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր քառասուն/ ՀՀ դրամով.

2/ նրան ամրակայված 04-048-0201-0010-001 ծածկագրի 451,6 քմ կիսաքանդ շինությունը վաճառել 136140 /մեկ հարյուր երեսունվեց հազար մեկ հարյուր քառասուն/ ՀՀ դրամով:

2. Աճուրդում հաղթող ճանաչված <<Արաքս Թռչնաֆաբրիկա>> ՓԲ ընկերության հետ կնքել առքուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշման հիման վրա կնքված հողամասի առքուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման:

4. Աշխատակազմի քարտուղարին հիմք ընդունել հողամասի առքուվաճառքի պայմանագիրը, համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի մայիսի <<10>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 12^{00}